Հավելված N 3
ՀՀ կառավարության 2023 թվականի
օգոստոսի 11-ի N 1367 - Լ որոշման

«Հավելված N 3
ՀՀ կառավարության 2022 թվականի
մայիսի 13-ի N 691-Լ որոշման

Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարության 2023-2025 թվականների արդյունքային շրջանակը

Հ/Հ	Նպատակ	Ցուցանիշ	Սահմանում	Մեթոդաբանություն	Տվյալների հավաքագրման պատասխանատու	Տվյալների աղբյուրը	Արժեքները			
							Ելակետային	Թիրախային 2023	Թիրախային 2024	Թիրախային 2025
1	**Ռազմավարական նպատակ 1. Քաղաքականությունների մշակման և իրականացման փաստահենք ու արդյունքամետ համակարգի կայացում**	1.1. Ռազմավարական պլանավորման իրավակարգավորումների առկայությունը	Ցուցանիշով գնահատվում է ռազմավարական պլանավորման օրենսդրական ու ընթացակարգային դաշտի համապարփակությունը:	Առավելագույն արժեքը՝ 5 Հաշվարկը՝ 1. Իրավական ակտերով սահմանված է պլանավորման առանցքային փաստաթղթերի կարգավիճակն ու աստիճանակարգությունը (1 միավոր), 2. Օրենսդրությունը սահմանում է պլանավորման քայլերը, այդ թվում՝ փաստաթղթերի ընդունման ընթացակարգերը (1 միավոր), 3. Գործադիրի կենտրոնական օղակում առկա է ռազմավարական պլանավորման որակի վերահսկման մարմին (1 միավոր), 4. Օրենսդրությունը սահմանում է ռազմավարական պլանավորման փաստաթղթերի համար ծախսագնահատման ու արդյունքային շրջանակի առկայության պարտադիր պահանջ (1 միավոր), 5. Հասանելի են ռազմավարությունների մշակման ու իրականացման կիրառելի ուղեցույցներ (1 միավոր):	Վարչապետի աշխատակազմի Ծրագրերի փորձաքննության վարչություն	Վարչապետի աշխատակազմի Ծրագրերի փորձաքննության վարչության ներքին հաշվետվություններ	2023թ. դրությամբ՝ 3/5	4/5	5/5	5/5

		1.2. Ռազմավարական պլանավորման փաստաթղթերի ներդաշնակությունը	Ցուցանիշը չափում է ռազմավարական պլանավորման առանցքային փաստաթղթերի փոխկապվածությունը ինչպես գերակայությունների, այնպես էլ միջոցառումների, ժամկետների ու ծախսագնահատման մասով:	Առավելագույն արժեքը՝ 3 Հաշվարկը՝ 1. Կառավարության ծրագրի գերակայությունները արտացոլված են ՄԺԾԾ-ում (1 միավոր): Եթե Կառավարության ծրագրով սահմանված չեն գերակայություններ, միավոր չի տրվում: Եթե հայտնաբերվում են 3 և ավել անհամապատասխանություններ, միավոր չի տրվում: 2. Ընթացիկ տարվան նախորդող երկու տարիների ընթացքում ընդունված ռազմավարական պլանավորման փաստաթղթերում տրված են կապեր Կառավարության ծրագրի թիրախների հետ (1 միավոր): Եթե առկա է շեղում 1-ից ավել փաստաթղթի դեպքում, միավոր չի տրվում: Եթե Կառավարության ծրագիրը չունի թիրախներ, միավոր չի տրվում: 3. Ընթացիկ տարվան նախորդող երկու տարիների ընթացքում ընդունված ռազմավարական պլանավորման փաստաթղթերում տրված են կապեր կառավարության կողմից ընդունված ու գործող այլ ռազմավարական փաստաթղթերի հետ (1 միավոր): Եթե առկա է շեղում 1-ից ավել փաստաթղթի դեպքում, միավոր չի տրվում: Եթե առկա չէ առնչվող որևէ այլ փաստաթուղթ, տրվում է 1 միավոր:	Վարչապետի աշխատակազմի Ծրագրերի փորձաքննության վարչություն	Ռազմավարական պլանավորման թվային համակարգ	2023թ. դրությամբ՝ 1/3	-	-	2/3

		1.3. Ռազմավարական պլանավորման փաստաթղթերի իրագործելիությունը	Ցուցանիշը չափում է ռազմավարական պլանավորման առանցքային փաստաթղթերի միջոցառումների ծրագրի, մշտադիտարկման ու գնահատման համակարգերի առկայությունն ու դրանց որակը:	Առավելագույնը արժեքը՝ 6 Հաշվարկը՝ 1. Ընթացիկ տարվան նախորդող երկու տարիների ընթացքում ընդունված ռազմավարական պլանավորման բոլոր փաստաթղթերն ունեն իրականացման պլաններ (1 միավոր): 2. Ընթացիկ տարվան նախորդող երկու տարիների ընթացքում ընդունված ռազմավարական պլանավորման փաստաթղթերն ունեն ծախսագնահատման շրջանակ, ներառյալ՝ ֆինանսավորման աղբյուրները (1 միավոր): 3. Ընթացիկ տարվան նախորդող երկու տարիների ընթացքում ընդունված ռազմավարական պլանավորման բոլոր փաստաթղթերն ունեն մշտադիտարկման ու գնահատման ծրագրեր, որոնք համապատասխանում են մեթոդական հրահանգին (1 միավոր) 4. Ընթացիկ տարվան նախորդող երկու տարիների ընթացքում ընդունված ռազմավարական պլանավորման փաստաթղթերի առաջընթացի կատարողականը բարձր է 80%-ից (3 միավոր), 60-80% է (2 միավոր), 50-60% է (1 միավոր), ցածր է 50%-ից (միավոր չի տրվում)	Վարչապետի աշխատակազմի Ծրագրերի փորձաքննության վարչություն	Ռազմավարական պլանավորման թվային համակարգ	2023թ. դրությամբ՝ 1/6	-	-	6/6

		1.4. Կարգավորման ազդեցության գնահատման որակը	Ցուցանիշը չափում է, թե որքանով են մշակվող քաղաքականության փաստաթղթերը փաստահենք:	Առավելագույն արժեքը՝ 5 Հաշվարկը՝ 1. Նախագծերի ազդեցության գնահատման ուղեցույցի առկայություն (առավելագույնը 2 միավոր) Եթե ուղեցույց չկա՝ 0 միավոր, եթե արդիական ուղեցույցն ու ձևաչափերը հասանելի են առցանց՝ 1 միավոր, եթե արդիական ուղեցույցն ու ձևաչափերը հասանելի են առցանց և առկա է ԿԱԳ իրականացման մեթոդաբանության ուսուցման առցանց մոդուլ կամ իրականացվել են ԿԱԳ վերապատրաստման դասընթացներ՝ 2 միավոր: 2. Նախագծերի ազդեցության գնահատման վերլուծության որակ (առավելագույնը 3 միավոր) Ընթացիկ տարվան նախորդող երկու տարիների ընթացքում ՀՀ Կառավարությունում ԿԱԳ որակի վերահսկողության համար պատասխանատու վարչության կողմից ԿԱԳ եզրակացությունների վերաբերյալ տրված դրական կամ բացասական դիրքորոշումներ՝ եթե դրական դիրքորոշումները կազմում են տրված դիրքորոշումների 80-100%-ը՝ 3 միավոր, 60-79%-ը՝ 2 միավոր, 40-59%-ը՝ 1 միավոր, մինչև 40%-ը՝ 0 միավոր:	Վարչապետի աշխատակազմի Կարգավորման ազդեցության գնահատման վարչություն	Պաշտոնական փաստաթղթաշրջանառության Mulberry համակարգ	2022թ. դրությամբ՝ 1/5	-	4/5	5/5
2	**Ռազմավարական նպատակ 2. Հանրությանը մատուցվող ծառայությունների որակի բարձրացում**	2.1. Քաղաքացիակենտրոն ծառայությունների մատուցման ինստիտուցիոնալ կառուցակարգերի առկայություն	Ցուցանիշը չափում է հանրությանը մատուցվող ծառայությունների ուղղությամբ համակարգված քաղաքականության և գործընթացների առկայությունը:	Առավելագույն արժեքը՝ 4 Հաշվարկը՝ 1. Քաղաքացիակենտրոն ծառայությունների մատուցման հստակ սահմանված քաղաքականության և առաջնահերթությունների առկայություն (առավելագույնը 1 միավոր) 1 միավոր՝ Կառավարության հաստատած քաղաքականության փաստաթղթերով հանրային ծառայությունների բարեփոխումների տեսլականի, հանձնառության և ծախսագնահատված գործողությունների առկայություն,	Փոխվարչապետ Մ. Գրիգորյանի գրասենյակ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալություն (համաձայնությամբ)	Իրավական ակտերի պաշտոնական հրապարակման հարթակ Փորձագիտական ուսումնասիրություն	2023 թ. դրությամբ՝ 2.5/4	3/4		4/4

				0. 5 միավոր՝ Կառավարության հաստատած քաղաքականության փաստաթղթերով ոլորտային կամ առանձին ծառայությունների տեսլականի, հանձնառության և ծախսագնահատված գործողությունների առկայություն, 0 միավոր՝ ծառայությունների բարեփոխումների վերաբերյալ Կառավարության քաղաքականության և տեսլականի բացակայություն: 2. Ծառայությունների քաղաքացիակենտրոն մատուցման համար հստակ պատասխանատուները նշանակված են (առավելագույնը 1 միավոր) 1 միավոր՝ ծառայությունների արդիականացման ու թվայնացմանն համար ինստիտուցիոնալ պատասխանատուները նշանակված են ըստ կյանքի իրավիճակների՝ Կառավարության որոշումներով կամ այլ իրավական ակտերով՝ պատասխանատվության հստակ շրջանակով, 0. 5 միավոր՝ ազգային օրենսդրության շրջանակներում առկա է ծառայությունների և թվայնացման վերաբերյալ սահմանված իրավասությունների շրջանակ, 0 միավոր՝ Կառավարությունը չունի ծառայությունների արդիականացման և թվայնացման համար սահմանված իրավասությունների շրջանակ և/կամ պատասխանատուներ: 3. Պետական հատվածում ծառայությունների և թվայնացման համակարգման մանդատը սահմանված է (առավելագույնը 1 միավոր) 1 միավոր՝ իրավական ակտերով սահմանված է ծառայությունների և թվայնացման ծրագրերի համակարգման մանդատը, 0 միավոր՝ ծառայությունների և թվայնացման համակարգման մանդատը բացակայում է:						

				4. Պետական համակարգում թվայնացման ծրագրերն անցնում են պարտադիր ուսումնասիրություն՝ առաջնահերթությունների և թվային ճարտարապետության համապատասխանության տեսանկյունից (առավելագույնը 1 միավոր) 1 միավոր՝ թվայնացման ծրագրերի քննարկման համարժեք ընթացակարգերը սահմանված են, և առկա են բավարար ապացույցներ, որ ընթացիկ տարվան նախորդող 2 օրացույցային տարվա ընթացքում մեկնարկած թվայնացման ծրագրերի 80%-ից ավելին անցել են սահմանված ընթացակարգերով, 0. 5 միավոր՝ թվայնացման ծրագրերի քննարկման և հաստատման ընթացակարգերը սահմանված են, սակայն կիրառվում են ոչ ամբողջությամբ, 0 միավոր՝ թվայնացման ծրագրերի քննարկման և հաստատման ընթացակարգեր առկա չեն: Ընդհանուր ցուցանիշը բոլոր բաղադրիչների պարզ հանրահաշվական գումարն է:						

		2.2. Ծառայությունների մատուցման թվային ենթակառուցվածքների ու ստանդարտների առկայություն	Ցուցանիշը գնահատում է ծառայությունների մատուցման համար առանցքային ենթակառուցվածքների հասանելիությունը և ստանդարտների ու ուղեցույցների կիրառումը:	Առավելագույն արժեքը՝ 6 Հաշվարկը՝ 1. Ծառայությունների միասնական ստանդարտները և ուղեցույցները ներդրված են և կիրառվում են (առավելագույնը 1 միավոր) 1 միավոր՝ Կառավարությունը հաստատել և/կամ հրապարակել է թվային ծառայությունների ստանդարտներ և ուղեցույցներ, որոնք ներառում են ծառայությունների նախագծման և թվայնացման հետ կապված բոլոր փուլերը, և ներդրումից հետո բոլոր պետական ծառայությունները նախագծվում են ըստ այդ ստանդարտների, 0. 5 միավոր՝ Կառավարությունը հաստատել և/կամ հրապարակել է թվային ծառայությունների ստանդարտներ և ուղեցույցներ, որոնք ներառում են ծառայությունների նախագծման և թվայնացման հետ կապված բոլոր փուլերը, սակայն ոչ բոլոր պետական ծառայություններն են նախագծվում ըստ այդ ստանդարտների, 0 միավոր՝ Կառավարությունը չունի թվային ծառայությունների ստանդարտներ կամ ուղեցույցներ: 2. Ծառայությունների մշտադիտարկման և գնահատման համակարգն առկա է, և պարբերական զեկույցները հասանելի են հանրությանը (առավելագույնը 1 միավոր) 1 միավոր՝ սահմանված է ծառայությունների մշտադիտարկման գործառույթը, որի համար առկա է հստակ նշանակված ֆունկցիոնալ միավոր, մշտադիտարկման շրջանակն ու մեթոդաբանությունն առկա են, և առնվազն մեկ զեկույց հրապարակված է ընթացիկ տարվան նախորդող երկու տարվա ընթացքում, 0. 5 միավոր՝ սահմանված է ծառայությունների մշտադիտարկման գործառույթը, առկա է հստակ	Փոխվարչապետ Մ. Գրիգորյանի գրասենյակ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալություն (համաձայնությամբ)	Փորձագիտական գնահատում	2023թ. դրությամբ՝ 1/6	3/6		5/6

				նշանակված ֆունկցիոնալ միավոր, 0 միավոր՝ մշտադիտարկման գործառույթներ և համակարգ առկա չեն: 3. Միջազգային լավագույն չափորոշիչներով փոխգործելիության իրավական համակարգը առկա է (առավելագույնը 1 միավոր) 1 միավոր՝ առկա է իրավական կարգավորում քաղաքացիների կողմից «միայն մեկ անգամ» տեղեկատվության տրամադրման իրավունքի վերաբերյալ, որը կիրառվում է կառավարման բոլոր մակարդակներում, 0. 5 միավոր՝ առկա է օրենսդրական կարգավորում քաղաքացիների կողմից «միայն մեկ անգամ» տեղեկատվության տրամադրման իրավունքի վերաբերյալ, որը կիրառվում է միայն պետական կառավարման մակարդակում, 0 միավոր՝ քաղաքացիների կողմից «միայն մեկ անգամ» տեղեկատվության տրամադրման իրավունքի վերաբերյալ օրենսդրություն առկա չէ կամ չի կիրառվում: 4. Առկա է ազգային փոխգործելիության շրջանակը (առավելագույնը 1 միավոր) 1 միավոր՝ փոխգործելիության ազգային շրջանակը սահմանված է և կիրառվում է կառավարման բոլոր մակարդակներում, 0. 5 միավոր՝ փոխգործելիության ազգային շրջանակը սահմանված է և կիրառվում է պետական կառավարման մակարդակում, 0 միավոր՝ փոխգործելիության ազգային շրջանակ սահմանված չէ կամ չի կիրառվում ամբողջությամբ: 5. Միջազգային ստանդարտներին համարժեք էլեկտրոնային նույնականացման և ստորագրության մեխանիզմը հասանելի է (առավելագույնը 1 միավոր) 1 միավոր՝ ազգային օրենսդրությամբ						

				էլեկտրոնային/թվային ստորագրությունը հավասարեցված է ձեռագիր ստորագրությանը, և թվային ստորագրության և հավաստագրման համակարգը համարժեք է միջազգային լավագույն ստանդարտներին, 0. 5 միավոր՝ ազգային օրենսդրությամբ սահմանված են կարգավորումներ էլեկտրոնային/թվային ստորագրության վերաբերյալ, և թվային ստորագրության և հավաստագրման համակարգն առկա է, 0 միավոր՝ էլեկտրոնային ստորագրության օրենսդրություն և համակարգ առկա չեն կամ թերի են կիրարկվում: 6. Ստանդարտներով սահմանված՝ օգտատերերի ներգրավման գործիքները և մեթոդները համատարած կիրառվում են պետական ծառայությունների մատուցման ժամանակ՝ 1 միավոր 1 միավոր՝ պետական կառավարման համակարգի մարմինների կեսից ավելին գործնականում կիրառում են օգտատիրոջ ներգրավման առաջադեմ գործիքներ, 0. 5 միավոր՝ պետական կառավարման համակարգի մարմինների կեսից պակասն են գործնականում կիրառում օգտատիրոջ ներգրավման առաջադեմ գործիքներ, 0 միավոր՝ Պետական կառավարման համակարգի մարմինները չեն կիրառում օգտատիրոջ ներգրավման գործիքներ: Ընդհանուր ցուցանիշը բոլոր բաղադրիչների պարզ հանրահաշվական գումարն է:						

		2.3. Հանրային ծառայությունների մատչելիություն	Ցուցանիշը գնահատում է ծառայությունների մատուցման հասանելիության աստիճանը հատուկ կարիքներ ունեցող անձանց համար:	Առավելագույն արժեքը՝ 3 Հաշվարկը՝ 1. Ծառայությունների քաղաքականությունը ներառում է մատչելիության ապահովման հետ կապված հստակ ստանդարտներ (առավելագույնը 1 միավոր) 1 միավոր՝ ծառայությունների մատչելիության ստանդարտները սահմանված են կարգավորումներով կամ Կառավարության կողմից հաստատված քաղաքականության փաստաթղթերով, 0 միավոր՝ ծառայությունների մատչելիության վերաբերյալ ստանդարտները բացակայում են: 2. Պետական կայքերի համար ապահովված են մատչելիության պահանջները (առավելագույնը 2 միավոր) 2 միավոր՝ պետական կայքերի համար սահմանված են մատչելիության պարտադիր ստանդարտներ, և դրանք ապահովված են 50 տոկոսից ավել կայքերի դեպքում, 1 միավոր՝ պետական կայքերի համար սահմանված են մատչելիության պարտադիր ստանդարտներ, և ներդրված են պետական կայքերի մինչև 50 տոկոսի մոտ, 0 միավոր՝ պետական կայքերի համար մատչելիության ստանդարտներ սահմանված չեն և չեն կիրառվում: Ընդհանուր ցուցանիշը բոլոր բաղադրիչների պարզ հանրահաշվական գումարն է:	Փոխվարչապետ Մ. Գրիգորյանի գրասենյակ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալություն (համաձայնությամբ)	Իրավական ակտերի պաշտոնական հրապարակման հարթակ Փորձագիտական գնահատում	2023թ. դրությամբ՝ 0/3	1/3		2/3
		2.4. Հանրային ծառայությունների արդիականացման մակարդակ	Ցուցանիշը գնահատում է պետության կողմից հանրությանը մատուցվող ծառայությունների մեջ կյանքի փորձառության սկզբունքով վերակառուցված, ծայրից ծայր թվային և արդիական խողովակներով մատուցվող ծառայությունների աստիճանը:	Առավելագույն միավորը՝ 3 Հաշվարկը՝ 1. Ծառայությունների արդիականացումն ու թվայնացումն ապահովվում է ըստ կյանքի իրավիճակների և ծայրից ծայր թվայնացման սկզբունքով (2 միավոր) 2 միավոր՝ ըստ կյանքի իրավիճակների վերակառուցված և ծայրից ծայր թվայնացված ծառայությունները կազմում են ընդհանուր ծառայությունների 50%-ից ավելին,	Փոխվարչապետ Մ. Գրիգորյանի գրասենյակ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալություն (համաձայնությամբ)	Հայաստանի ազգային ծառայությունների հարթակ Փորձագիտական հարցումներ և գնահատում	2023թ. դրությամբ՝ 0/3	1/3		2/3

				1 միավոր՝ ըստ կյանքի իրավիճակների վերակառուցված և ծայրից ծայր թվայնացված ծառայությունները կազմում են ընդհանուր ծառայությունների մինչև 50%-ը 0 միավոր՝ ծառայությունների արդիականացումն ու թվայնացումն ապահովվում է հատվածական եղանակով՝ գործառույթների թվայնացման տրամաբանությամբ, 2. Ծառայությունների ազգային հարթակում ծառայությունների վերաբերյալ տեղեկատվությունն ամբողջական է՝ ըստ կյանքի իրավիճակների (առավելագույնը 1 միավոր) 1 միավոր՝ ծառայությունների ազգային հարթակում հանրությանը մատուցվող բոլոր ծառայությունների վերաբերյալ տեղեկատվությունն ամբողջական է՝ ըստ կյանքի իրավիճակների, 0. 5 միավոր՝ ծառայությունների ազգային հարթակում հանրությանը մատուցվող ծառայությունների վերաբերյալ առկա է տեղեկատվություն միայն թվային հասանելի կյանքի իրավիճակների համար, 0 միավոր՝ ծառայությունները վերաբերյալ տեղեկատվությունը տրված է հատվածական՝ բազմազան պետական կայքերի և հարթակների միջոցով: Ընդհանուր ցուցանիշը բոլոր բաղադրիչների պարզ հանրահաշվական գումարն է:						
3	**Ռազմավարական նպատակ 3. Գործադիր իշխանության ինստիտուցիոնալ արդյունավետության բարձրացում**	3.1. Պետական կառավարման համակարգի մարմինների պահպանման ծախսերի մասնաբաժինը պետական բյուջեի ընդհանուր ծախսերի մեջ, %	Ցուցանիշը չափում է վարչապետի աշխատակազմում և պետական կառավարման համակարգի մարմիններում քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման ու մոնիտորինգի իրականացման համար կատարված փաստացի ծախսի մասնաբաժինը պետական բյուջեի ծախսերի մեջ:	Հաշվարկի բանաձևը՝ (հաշվետու տարվա ընթացքում կառավարման համակարգի մարմիններում քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման ու մոնիտորինգի իրականացման համար կատարված փաստացի ծախս)*100/հաշվետու տարվա պետական բյուջեի փաստացի ծախսեր Բանաձևի համարիչում ներառվում են վարչապետի աշխատակազմը, նախարարությունները, վարչապետին, կառավարությանը և	Ֆինանսների նախարարություն	Պետական բյուջեի տարեկան հաշվետվություն՝ համաձայն Ֆինանսների նախարարություն հրապարակումների	Ենթակա է գնահատման:	-	-	Ենթակա է սահմանման ելակետայի ն արժեքի գնահատում ից հետո:

				նախարարություններին ենթակա մարմինները:						
4	**Ռազմավարական նպատակ 4. Հանրային ծառայության մրցունակության բարձրացում**	4.1. Հանրային ծառայության գրավչությունը	Ցուցանիշը չափում է հանրային ծառայության թափուր հաստիքների համար դիմած և մրցույթին մասնակցած թեկնածուների հարաբերակցությունը թափուր հաստիքներին:	Հաշվարկի բանաձևը՝ (Թափուր հաստիքի համար դիմած և մրցույթին մասնակցած թեկնածուների քանակը հաշվետու տարվա մեջ)/(թափուր հաստիքների ընդհանուր թիվը) Ցուցանիշը չափվում է քաղաքացիական ծառայության հաստիքների համար: Դիտարկվում են վարչապետի աշխատակազմը, նախարարությունները, վարչապետին, կառավարությանը և նախարարություններին ենթակա մարմինները:	Վարչապետի աշխատակազմի Քաղաքացիական ծառայության գրասենյակ	Մարդկային ռեսուրսների կառավարման HRMIS համակարգ	Ենթակա է գնահատման:	-	-	Ենթակա է սահմանման ելակետային արժեքի գնահատումից հետո:
5	**Ռազմավարական նպատակ 5. Մասնակցային կառավարման համակարգի կայացում ու հանրության հետ արդյունավետ ու թիրախային հաղորդակցության ապահովում**	5.1. Իրավական ակտերի քննարկումներում հանրային մասնակցության աճ, %	Ցուցանիշը չափում է հանրային քննարկման հիմնական խողովակներով՝ e-draft, հանրային լսում, հանրային խորհուրդ, նախարարին կից հասարակական խորհուրդ և մասնակցայնության ապահովման նոր մոդելներով ստացված դիտարկումների ու առաջարկների աճը նախորդ տարվա համեմատ:	Հաշվարկի բանաձևը՝ (Հաշվետու տարվա ընթացքում հանրային քննարկման ներկայացված իրավական ակտերի վերաբերյալ ստացված դիտարկումների հարաբերակցությունը իրավական ակտերի ընդհանուր թվին) * 100/(Հաշվետու տարվան նախորդած տարվա ընթացքում հանրային քննարկման ներկայացված իրավական ակտերի վերաբերյալ ստացված դիտարկումների հարաբերակցությունը իրավական ակտերի ընդհանուր թվին)	Վարչապետի աշխատակազմի հանրային մասնակցության համակարգման միավոր	Պետական կառավարման համակարգի մարմիններից ստացված տվյալների հիման վրա մշակված հաշվետվություն	2022թ.՝ 1300 նախագիծ և 1628 առաջարկ *Հաշվարկվել են e-draft հարթակով ստացված դիտարկումները՝ մոնիթորինգայի ն այլ տվյալների բացակայության պատճառով*	-	125%	200%
		5.2. Իրավական ակտերի հանրային քննարկումների արդյունավետության աճ, %	Ցուցանիշը չափում է հանրային քննարկման հիմնական խողովակներով՝ e-draft, հանրային լսում, հանրային խորհուրդ, նախարարին կից հասարակական խորհուրդ և մասնակցայնության ապահովման նոր մոդելներով ստացված դիտարկումների ու առաջարկների ընդունվելու աստիճանը պետական մարմնի կողմից:	Հաշվարկի բանաձևը՝ (Հաշվետու տարվա ընթացքում հանրային քննարկման ներկայացված իրավական ակտերի վերաբերյալ ներկայացված ու ընդունված դիտարկումների հարաբերակցությունը ստացված դիտարկումների ընդհանուր թվին) * 100/(Հաշվետու տարվան նախորդած տարվա ընթացքում հանրային քննարկման ներկայացված իրավական ակտերի վերաբերյալ ներկայացված ու ընդունված դիտարկումների հարաբերակցությունը ստացված դիտարկումների ընդհանուր թվին)	Վարչապետի աշխատակազմի հանրային մասնակցության համակարգման միավոր	Պետական կառավարման համակարգի մարմիններից ստացված տվյալների հիման վրա մշակված հաշվետվություն	Ենթակա է գնահատման:	Ելակետային արժեքի հաշվարկ	125%	150%

		5.3. Կառավարության և պետական կառավարման համակարգի կողմից իրականացվող բարեփոխումների վերաբերյալ հանրային իրազեկվածության մակարդակի աճը, %-ային կետ	Ցուցանիշը չափում է հանրային կարծիքի հարցման հարցաշարում ներառված թեմաների վերաբերյալ հարցվածների տեղեկացված լինելու աստիճանի փոփոխությունը:	Հաշվարկը՝ Հանրային կարծիքի ներկայացուցչական հարցում: Հարցաշարում ներառվում են հարցեր հանրային կարևոր նշանակություն ունեցող ընտրված 5 բարեփոխումների վերաբերյալ, որոնք ընտրվում են Վարչապետի աշխատակազմի կողմից: Յուրաքանչյուր բարեփոխման մասով հարցվողներին տրվում է «Որքանո՞վ եք տեղյակ տվյալ բարեփոխման մասին», հարցի պատասխաններն են՝ «Լիովին տեղյակ եմ», «Մասամբ տեղյակ եմ», «Ընդհանրապես տեղյակ չեմ»: Յուրաքանչյուր բարեփոխման համար հաշվարկվում է «Լիովին տեղյակ եմ», «Մասամբ տեղյակ եմ» պատասխանների մասնաբաժինը (%) ընդհանուր պատասխանների մեջ, ապա հաշվարկվում է բոլոր 5 բարեփոխումների համար տվյալ ցուցանիշի թվաբանական միջինը: Ցուցանիշը չափվելու է ելակետային ու ամփոփիչ տարում: Թիրախային ցուցանիշը հաշվարկվում է ամփոփիչ տարվա ցուցանիշի և ելակետային ցուցանիշի տարբերությամբ:	Վարչապետի աշխատակազմի «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ (համաձայնությամբ)	Հանրային կարծիքի հարցում	Ենթակա է գնահատման:	Ելակետային արժեքի հաշվարկ	-	20%-ային կետ

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

15.08.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ